

Շաժիշկը երեսս նայեցաւ , և ձեռքս բռնելով .

“ — Այդպէս մի կարծեր , պարոն ըստա , ընտանի ծանրութեամբ մը . ապահով եղիր թէ ուր որ գթութիւն չկայ , հոն բնաւ իրաւունք ալ չկրնար ըլլալ ” :

Չթողուց ինծի որ պատասխան տամ , և խրկեց որ երթամ՝ զգեստներս փոխեմ : Օ ինքը ընտանիքովը հանդերձ դեռ մէկ ժամի մը չափ բռնեցի , ստիպելով որքիչ մը բերաննին անուշցընեն . ետքը ելաւ գնաց , ամենայն կերպով ապահովցընելով զիս տղուս վիճակին վըրայ :

Եւ իրաւցընէ դեռ հանդարտիկքուն կ'ըլլար , և յայտնի կ'երեւար որ առենին եղած իննամքները վտանգին առջեւը առեր էին , և յոյս կար առանց փորձանքի մը խալըսելու :

Հարկաւ փորձած պիտի ըլլանք որ մեծ վախսէ մը ետև յաջորդած մեծ ռախութիւնը թնչ աստիճանի ազդեցութիւն կ'ընէ . բնականապէս մարդուս սիրու կը շարժէ ու մտածել կուտայ , և կարծես թէ կը ստիպուի զգացած ուրախութեանը համեմատ աւելի աղէկութիւն մը ցուցընել : Ուստի երբ բոլորովին ինքիրմէս դուրս ելած՝ տղուս անկողնոյն քով , կը մտածէի այն բարերար ընտանեաց ու այն գեղեցիկ առածին վրայ թէ , ուր գիւտնիտն չկայ , հոն բնաւ իրաւունք ալ չկայ , յանկարծ մէյլ ալ բան մը միտքս ինկաւ . և ահա միտքս եկար դուն ու քու պզտիկ աղջիկդ , ու սկսայ ըսել ինքիրենս . թէ ահա իրենք ալ կարօտ են օգնութեան , ու ես փոխանակ օգնելու , իմ իրաւունքիս վրայ յամառեալ կեցեր եմ , որ ըստ ինքեան նոյնպէս կրնար մտածել այն օտարականն ալ , բայց ըսրաւ : Դէպէին նմանութիւնը սիրու շարժեց :

Ի՞նանկ սիրու տակնուվրայ եղեր էր , որ տեսակ տեսակ մտածութիւններով սկսայ տանջուիլ . և ինծի այնպէս մը կու գար որ եթէ ես այն կնկան վրայ չգթամ , Իստուած ալ իմ տղուս չողորմիր և զինքը չառողջացըներ : Իյս մտա-


ծութիւնը ան աստիճանի վրաս տեղիք ըրաւ , որ առանց անձրեխն նայելու , վազեցի ախուը , հեծայ ձիուն վրայ , և գացի Վիւլչուղ փաստաբանին տունը , այն միջնոցին որ ինքը պառկելու կը պատրաստուէր : Երբօր ըսի թէ եկեր եմ թղթերը ետ առնելու , զիս խենթկարծեց . բայց ես առանց նայելու երբոր թղթերը առի , գոհ եղայ , ու սիրու հանդարտեցաւ : Հեծայ նորէն ձիուն վրայ , և շուտով քացընելով գարձայ Դան եկայ , և տեսայ որ Ատեփանուը հրեշտակի մը պէս կը քնանար :

Ի՞նացածը արգէն ձեզի ծանօթ է : Դուն փոխանակ մէկ անգամով պարտքդ հատուցանելու , տասը տարուան մէջ վճարեցիր , առուտուրդ ալ յաջող գընաց ու աղջիկդ մեծցաւ , անանկ որ հինգատաստաննիս հիմա իննամիութիւն պիտի փոխուի : Հիմա յուսամ որ իմացաք թէ ինչու համար ամէն անգամ որ ձեզի ըրած շնորհքս կը յիշէիք , գալոցի աշկերտի մը պէս կը կարմրնայի . ով որ առանց արժանեաց մէկը կը գովիլ , այն գովիլսար խօսողին քովը կը մնայ : Ի՞նաւասիկ ձեզի շմարիտը խոստովանեցայ , և ալ ամընալու բան չեմ ունենար . որովհետեւ , ինչպէս գիտէք , այդքարեգործութիւնը ընողը ես չեմ , հասպա այն ազնիւ մարդը զոր անկէ վերջը մէյմ'ալ չտեսայ . ինքը ինծի սորվեցուց թէ որն է բուն շմարիտ իրաւունքը , որով և ինծի վարժապետ եղաւ առանց գիտնալու :

### ՍՈՒՎԵՄԴՐ

Գումոյ քաղաքն ու իր լիձը :

Համանուն գաւառին գլխաւոր քաղաքն է Վասմոյ , զուարձալի հովտի մը մէջ , նոյնանուն լշին հարաւային արեմանտեան ծայրը կառուցուած , որ Վիւլանու հիւսիսային կողմը կ'իյնայ : Վալոր քաղաքը տարսալապատ է , և ամուր , աները վայելուէ , փաղոցները լայն ու մաքրաշէն : 42 ժողովրդապետական է



### Գումոյ քաղաքն ու իր լիձը .

Կեղեցի ունի , բոլորն ալ մէկմէկէ գե-  
րազանց Ճարտարապետութեամբ շի-  
նուած : Երևելի է քան զամէնը մայր  
եկեղեցին , որուն ներքին որմունքը մար-  
մարիսն քարերով պատած է : Ի՞սկ ե-  
կեղեցիս որ Վառթացի Ճարտարապե-  
տութեամբ շինուած է , ճակատին վրայ  
զետեղուած ունի խորադրում քանդա-  
կով կրտսերն Պլինիոսի արձանը , որ ա-  
մենեին համաձայն է նոյն արձանին  
ստորագրութիւնն ընող հին հեղինա-  
կաց խօսքերուն հետ . դարձեալ մեծ  
դրան չորս դին իրեն նուիրուած այլ և  
այլ արձանագրութիւններ կան :

Վառմոյ ընդարձակ ու գեղեցիկ թա-  
տրոն մը ունի հին ամրոցի մը փլատակաց  
վրայ բարձրացած : Խակ լի իդո արուար-  
ձանին , որ ազնուականաց թաղն է և  
լի մեծակառոյց պալատներով , նշանա-

ւոր չենքերն են լալէնի ըսուած պալա-  
տը , ուր որ բնակած է հռչակաւորն  
Պիոլոս Հովիոս , և ( )տէսգալգի ընտա-  
նեաց պալատը : Ի՞սկ քաղաքս ունի մե-  
տաքսի , թաւիշի , ձեռնոցի և գուլպայի  
գործարաններ , երկաթի ձուլարան , և  
բնական պատմութեան ու բնագիտու-  
թեան թանգարաններ : Բնակիչն է  
18,000 , որոնց մեծ մասը դէպ 'ի Վաեր-  
մանիա ու Հելուետիա կը ցրուին այլ և  
այլ վաճառքներ տանելով՝ ինչպէս հայե-  
լի , տեսաբանական ապակիններ , նկար-  
ներ և շրջանակաւոր քանդակներ ևն :  
Վառմոցոց օտար աշխարհներ երթալու  
այս սովորութիւնը հռովմայեցւոց կայ-  
սերութեան ժամանսակէն 'ի վեր է , ո-  
րոնք բոլոր Խտալիա կը տարածուէին  
իբրև որմնադիլք :

Ի՞սկ քաղաքս ծնած երևելի անձինք .

ներն են Կէլիոս լատին բանաստեղծը, կրտսերն Պլինիոս, ըստ ոմնաց նաև Արէցն Պլինիոս, Պլոդոս Հովիոս, Կղեմէս Ժ. և Խննովկենտիոս Ժ. սրբազն քահանայապետները:

Գոտմոյի մօտ համանուն լճին արևելեան ափանցը վրայ կ'իյնայ Պլինիանագեղը ուր կայ աղքիւր մը որ շատ նշանաւոր է իր կանոնաւոր մակրնթացութեանը համար՝ զորն որ գեղեցիկ կը նկարագրէ Պլինիոս իր գրուածոցը մէջ:

Ծուլիոս Կեսար Յունաց գաղթականութիւն մը հաստատեց այս քաղաքիս մէջ՝ որ շատ նշանաւոր եղաւ հռովմէական կայսերութեան, լ ոնդորարտացոց թագաւորութեան և Գերմանական կայսերութեան ժամանակները: Գոտմոյի ամենէն աւելի ծաղկած միջոցը եղած է Ժ. և Ժ. դարերուն ատենները, որ Կիպելլինեանց կողմնակցութեան գլուխ կեցած կ'իշխէր մերձակայ երկիրներուն վրայ, իրեն նախանձորդ ունենալով Ո'եդիոլանը, որ Կուէլֆեանց կուսակից էր: Գոտմոյ 1127էն Ո'իլանցոց դաշնակից զօրքերէ պաշարուելով առնուեցաւ՝ որոնք բոլոր քաղաքը մոխիր դարձուցին. բայց իր փլատակներուն վրայ դարձեալ կանգնուելով կամաց կամաց իր առջի փայլն ու մեծութիւնը նորէն ստացաւ: Լոյս ժամանակէս սկսեալ ձամբայ բացուեցաւ Լուստրիացոց առաջին անգամ Լոտալիա սոտք կոխելու: Գոտմոյ 1241էն մինչեւ 1335 գրեթէ անընդհատ ահաւոր պատերազմներով տակն ու վրայ եղած վերջապէս Ո'իլանու իշխանութետակ ինկաւ, և անկէ ետև ալ անոնց հետ միատեղ յայսկոյս Լուպեանց ըստուած հասարակապետութեան մասն եղաւ, և անկէ ետքն ալ Ո'եծին Լաբոլէտնի ատեն իտալական թագաւորութեան գաւառ մը մինչեւ 1804 և լարիոյ նահանգին գլխաւոր քաղաքը:

Գոտմոյ լիճը, համանուն գաւառին արևելեան դին է, և կը ձգուի հիւսիսէն դէպ 'ի հարաւ և Պելլաձիոյի մօտ երկու ծիւղ կը բաժնուի. այն մասը որ հարաւային արևմտեան կողմը կ'իյնայ,

ուր է Գոտմոյ քաղաքը, այս քաղաքիս անունն առած է. իսկ միւս կողմը որ հարաւային արևելքը կը ձգուի և կը տարածուի մինչեւ լ էքքոյ, լ էքքոյի լիճ կ'ըսուի: Գոտմոյի լիճը վերին մասէն առած մինչեւ Պելլաձիոյ 5 փարսախս երկայնութիւն ունի. հարաւային արևմտեանը 6 փարսախս, իսկ հարաւային արևելեանը 4 փարսախս. ամբողջական ու ընդհանուր լայնքը 1 փարսախս է:

Գոտմոյ լիճը 60<sup>էն</sup> աւելի պղտի գետակներ կ'ընդունի իր մէջը, որոնց մեծ մասը հոսելու միջոցնին գեղեցիկ ջրվէժներ կը ձևացընեն: լ երոյիշեալ գետերուն մէջէն ամենէն նշանաւորն է լուտա գետը որն որ հիւսիսային կողմէն այս լճիս մէջ կը մտնէ և ամբողջ լճին երկայնութիւնը կտրելով լ էքքոյի կողմէն կ'ելլէ ու կը սկսի նորէն իր ընթացքը շարունակել:

Գոտմոյ լիճը բարձր է ծովուն երեսէն 109 կանգուն, իսկ Ո'իլանու գաւառին երեսէն 30. բայց շատ անգամ ձիւներուն հալելէն ետև մինչեւ 15 կանգուն սովորականէն աւելի կը բարձրանայ: Լոյս ածումը աւելի զգալի է հարաւային արևմտեան մասին մէջ ուսկից որ ամենէին ջրոյ հոսանք մը դուրս չելլեր, որով և հիւսիսային քամիով բոլոր ջրերը հոն կը մղուին: հիւսիսային քամին կանոնաւոր կերպով արևել մտնելէն մինչեւ երկրորդ առաւօտ կը տեէ. և անկէ ետև կը տիրէ խազաղ անդորրութիւն մը լճին վրայ մինչեւ որ կէսօրուարին և երբեմն նաև վտանգաւոր կ'ըլլայ հոն նաւարկելը: լոյնպէս շատ անգամ մէգ և կարկուտ կ'ըլլայ՝ որոնց մէ առաջ կու գան բուռն մըրիկներ:

Գոտմոյ լիճը, լուպեանց ստորոտը գըտնուած ուրիշ լճերուն մէջ ամենէն զըւարձալին է. չորս կողմը լեռներ պատած են որոնց բարձրութիւնը 1,400<sup>էն</sup> մինչեւ 1,500 կանգուն կը հասնի. իսկ այս լեռանց հիւսիսային կողմը, ուր է Գոտմոյ և լ էքքոյ, հաղիւ 200 կամ 300

կանգնոյ կը հասնի լերանց բարձրութիւնը, զուարձալի բլուրներ ձևանալով :

Դամոյի և լեքքոյի մօտ լերանց ստորոտները և լճին ափունքը ամառուան ամենազուարձալի դիրքերէն մէկն է աշխարհքիս մէջ . լճին ափունքը ամենազգի պտղատու ծառերով բոլոր ծածկած է՝ որոնց մէջէն կը բարձրանան Արևանու մեծամեծաց գիւղական զբօսանաց ամենասիրուն ամառաստաններն իրենց զուարձալի պարտէզներով . կը գրտնուին հոս շատ տեսակ վայրի և որսական կենդանիներ և տեսակ մը լեռնային մուկ՝ որ Ատտայի հոսանաց ձահիձներուն մէջ կ'ըլլայ . իսկ լճին մէջն ալ կը գտնուին կարմիախայտ և ուրիշ տեսակ տեսակ ձկներ . իսկ ջրին վրայ ալ շատ անգամ կը տեսնուին անբաւ հաւալումներ, կարապ և ուրիշ ջրային թռչուններ :

Դամոյի հիւսիսային կողմերը առատ հանքեր կը գտնուին . իսկ արևելեան և արևմտեան ափունքը կան երկաթի և պղնձի ու կապարի հանքեր :

### Ուսումնական նորագորք :

Արաւլիձն ու իր շրջակայները : — Իներրապուրկի գիտութեանց Ռ'եմարանը աս մօտերս երկու ուսումնական երիտասարդներ խաւրեց որ երթան Արաւլիձին ու անոր մօտիկ դաշտերուն վրայ կենդանաբանական ու տնկաբանական հետազօտութիւններ ընեն . զորոնք համառօտ կերպով մը հոս դնելը աւելորդ չենք սեպեր :

Պ. Պորչաքոֆ հետազօտեց Արաւլիձին շրջակայքն եղած բոյսերը, որոնք 900<sup>է</sup> կը հասնին, և ասոնց մէջ գտեր է 300 տեսակ ծառ որ անարգել առաջ կու գան Աիր կամ Աիհոնի եղերքները : Բայց տեղւոյն ընդարձակութեանը համեմատ բուսոց տեսակը քիչ է, և շատ նմանութիւն ունին Ալճերիի ու հիւսիսային Ատլասայ բոյսերուն հետ :

Բայց այս տնկաբանին հետազօտութեանցը կարեռագոյն արդիւնքն այն է որ Արաւլիձին հիւսիսային արևելեան կողմը շատ մը տեսակ բոլորովին ովկիանեան բոյսեր գտեր է, ու նաև անանկ տնկոց ցեղեր որ յատկապէս ծովունյատակը միայն կրնան գտնուիլ, և առաջ չեն գար ոչ աղային և ոչ անոյշ ջրի լճերու մէջ :

Այս հետազօտութիւնս բաց 'ի իր տնկաբանական օգտէն, նաև աշխարհագրական ու պատմական տեսութք ալ մեծապէս հետաքննական է, որով հետեւ ասով գրեթէ աներկբայ կերպով կը հաստատուի որ Արաւլիձ չէ, այլ նախնական ծովու մը մասն է : Արդէն ծանօթ էր որ կային Արաւլիձին մէջ տեսակ մը թռւլամարմին կենդանիներ, որոնք շատ կը նմանին ծովու մէջ ապրող թռւլամարմին կենդանինեաց . բայց չեր գիտցուէր որ լճին խորերը ովկիանեան բոյսեր գտնուին :

Այս երկու տեսութիւններովս գրեթէ որոշ կը հաստատուի Կասպից ծովուն ու Արաւլիձին ծագման խնդիրը, զորոնք հիները Առուցեալ ծովուն իթրեւ երկու մեծամեծ նեղուցները կը համարէին : Բայց այս կարևոր խնդիրս հաստատելու համար, դեռ ուրիշ նորանոր հաւաստիքներու պէտք ունինք :

Իսկ Պ. Ալիվէցով, որուն կենդանաբանական մասն յանձնուած էր, ինքն ալ նաև շատ մը դիտողութիւններ ըրաւ : Բայց զոհ եղաւ իր ուսումնասէր եռանդեանը . որովհետեւ իր զննութիւններն ընելու համար երկրին խորերը սաստիկ առաջերթալով, հիներու խումբ մը վրան յարձակեցաւ : Պաշտպանեց ինքզինքը քաջութեամբ, ու տասնըորս վէրք առնելով գերի ինկաւ, բայց բարեբաղդաբար քիչ ատենէն աղատ թռղուցին զինքը :

